

ժողովոց բուսականներու, կաթողիկոսաց եւ չորս գրլխաւոր պատրիարքական Արքունոց, Հռոմվայ կայսերաց, Օսմանեան բազաւորաց վրայ, 1696 ին գրուած, Գրիգոր Կամախեցիի *Պատմական յիշատակները*, որոնք մինչեւ 1640 կը հասնին, Յովնաննէս Կամենիցացւոյ *Յիշատակագրութիւնք*, որ մինչեւ 1610 կը հասնի, եւ զոր յետոյ իր բողբ Յոսեփ իբրեւ *Տարեգրութիւն*, դարձեալ ըստ Հ. Ալիւանի, շարունակած է մինչեւ 1621, ինչպէս նաեւ Գրիգոր Կեսարացւոյ *Թուականք եւ Պատմութիւնք*, մինչեւ 1636 հասցուած:

Ասոնց կարգին, երբ ոչ Գարանաղեցիի եւ Գաւրիժեցիի գիծին վրայ անշուշտ, բայց ապահովաբար բոլոր միւսներէն բարձր կը կանգնի Քեօմիւրնեան, Carbonari-ն ըստ Իսպաղանոց, որ, լեզուագէտ, տաղանդաւոր հմուտ գրիչ, բանաստեղծ եւ կրօնագէտ, իբրեւ նոսար մանաւանդ Կ. Պոլսոյ Մարտիրոս Պատրիարքին, իր ժամանակի անձանց ծանօթութիւնը եւ անցից հասկըցողութիւնը ունէր եւ կարողութիւն գրչի եւ արտայայտութեան, ինչպէս կը տեսնուի իր *Ստանկոյղի Պատմութիւն* գործէն եւս: Իսկ երբ դեռ յայտնուին եւ հրատարակուին իր *Հայոց Պատմութիւնը* (հայերէն եւ քրքերէն գրուած) եւ *Հայաստանի Աշխարհագրութիւնը*, որ կը պարունակէր Հայոց բոլոր վանքերուն «տեղագրութիւնը կամ տեղագրութիւնը», ինչպէս կ'ակնարկուի *Հայաստանում* ին մեջ, եւ որոնց վերջինը գրած պիտի լինի Աւստրիոյ դեսպանին խնդրանքով, տարակոյս չկայ թէ իր տեղը շատ աւելի նշանակելի պիտի դառնայ Հայ Պատմագրութեան մեջ:

Այսպիսի դեմք մը եւ իր գործերը արժանի էր որ ծանօթացուէին ուսումնասիրութեամբ եւ հրատարակութեամբ, աշխատութիւն՝ զոր կատարած էին բանասէր Հ. Ն. Ակիմեան եւ բանահմուտ Տոքթ. Վ. Թորգոմեան, եւ զոր Ձեռ Սրբազնութիւնը ահա կը կատարելագործէ: